

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>ՀՀ փոխվարչապետի 2020թ. սեպտեմբերի 11-ի N 555-Լ որոշումով հաստատված Մեդալը բաղկացած է հնգանկյուն կախիչից և դրան կապողակով ամրացած սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է, այն ոսկեգույն է պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից, փայլատ տեխնոլոգիայով և արտադրվում է դրոշմման ճանապարհով: Սկավառակի դիմերեսին պատկերված հարկադիր կատարումն ապահովող ծառայության ռելիեֆային խորհրդանշանը՝ կենտրոնական մասում պատված երկնագույն արծնիով: Խորհրդանշանը ներքևի մասում եզերվում է «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» գրվածքով, իսկ վերևի մասում՝ արծնապատ եռագույնով: Մեդալի վերևի կենտրոնական մասում լազերային մեթոդով գրված է «10 ՏԱՐԻ» գրվածքը: Մեդալի դարձերեսին հայերեն ուռուցիկ մեծատառերով գրված են «ՀԱՐԿԱՊԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը: Կախիչը պատրաստվում է ամուր մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող հարկադիր կատարումն ապահովող ծառայության գույները խորհրդանշող գույների ժապավենով: Ժապավենի հիմնամասը սև է, որի վրա առկա են 2 մմ լայնքով դեղին գույնի 4 զույգներ: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևի մասինը՝ 47 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը՝ կենտրոնից մինչև ներքևի գագաթը՝ վերից վար 50 մմ է: Կախիչի դարձերեսին ամրացված է մեդալը հագուստին ամրացնելու հարմարանք: Մեդալի դարձերեսին դրոշմված է «Հարկադիր կատարման ծառայություն» բառերը և մեդալի հերթական համարը: Համապատասխան տուփով: Մեդալի պատկերը՝ համաձայն նկարի: «10 ՏԱՐԻ ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ՄԵՂԱԼ</p>







## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 2405-ЕЦДЦ72Р-22/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	